# «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի մայիսի 16-ի № 650–Լ որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

___ ___________2019 թ. N ____- Լ

**Հայաստանի Հանրապետության ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 16-Ի N 650–Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի պահանջով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի մայիսի 16-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին N 650-Լ որոշման 1-ին հավելվածի 97.2-րդ կետի միջոցառման՝

1) «Համակատարող» սյունակում «Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն» բառերը փոխարինել «Էկոնոմիկայի նախարարություն» բառերով, «Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն» բառերը՝ «Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն» բառերով, իսկ «Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների» բառերը՝ «Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն» բառերով և հանել «Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն» բառերը.

2) «Ժամկետ» սյունակում «2019-2022թթ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ» բառերը փոխարինել «2022թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից: